

**Վիճակագրական արտադրանք – Վիճակագրական բիզնես ռեգիստր /վիճակագրական բիզնես ռեգիստր, սնտեսապես ակտիվ կազմակերպություններ/- տարեկան**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<p>1. <i>Կարիքների ձևակերպում</i></p>		
	<p>1.1 Կարիքների բացահայտում</p>	<p>Վիճակագրական բիզնես ռեգիստրի տեղեկատվական բազայում ընդգրկված վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների տեսանկյունից անհրաժեշտ ցուցանիշներն են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հասույթների ու աշխատողների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունն ըստ ՀՀ վարչատարածքային բաժանման, գործունեության հիմնական ու ոչ հիմնական տեսակների, կազմակերպությունների կազմակերպա-իրավական տեսակների, հիմնադիրների և ըստ այլ չափանիշների:</p> <p>Բիզնես ռեգիստրի վարման անհրաժեշտությունը պայմանավորված է դրանում ընդգրկված տեղեկատվության (վիճակագրական ցուցանիշների) նկատմամբ ինչպես Արմստատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների շարունակաբար աճող պահանջով:</p> <p>Վիճակագրական բիզնես ռեգիստրի վարումը Արմստատի ներքին նպատակներով կիրառվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ Արմստատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների ճյուղային բազաներում առկա տեղեկատվության միմյանց համապատասխանեցման, դրանց արդիականացման, ինչպես նաև հիմք է հանդիսանում վիճակագրական ընտրանքների կառուցման համար:</p> <p>Վիճակագրական բիզնես ռեգիստրի ցուցանիշների խմբավորումներն ըստ անհրաժեշտության տրամադրվում են վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին՝ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, գիտական, կրթական հաստատություններին, միջազգային կազմակերպություններին և դրա նկատմամբ պահանջարկ ունեցող այլ սուբյեկտներին՝ պահպանելով դրանց գաղտնիությանն վերագրվող օրենսդրական պահանջները:</p>

<p>1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում</p>	<p>Տեղեկատվության նկատմամբ օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով վիճակագրական տարեկան ծրագրի նախագիծը կարծիքի է ներկայացվում ընտրանքային կարգով ընտրված (ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված) 147 հիմնական վիճակագրական տեղեկատվության օգտագործողների (պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատաիրավական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջաններ, հասարակական և միջազգային կազմակերպություններ և զանգվածային լրատվամիջոցներ): Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության» հարցաթերթի միջոցով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=131">https://www.armstat.am/am/?nid=131</a> հղումը):</p>
<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>	<p>Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագիրն է: Պաշտոնական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է Հնգամյա Ծրագիր, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ Տարեկան Ծրագիր: Ծրագիրը սահմանում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ինչպես նաև մյուս պետական մարմինների՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող վիճակագրական դիտարկումներում ընդգրկված ցուցանիշների (և դրանց հավաքման, մշակման, ամփոփման, հրապարակման աշխատանքների) ցանկը, ինչպես նաև դրանց հաշվարկման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:</p> <p>Հնգամյա և Տարեկան ծրագրերով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:</p> <p>Ծրագիրը մշակվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա, որի արդյունքում ամփոփվում են վերջիններիս կողմից ներկայացվող առաջարկություններն ու դիտողությունները:</p> <p>Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը» պայմանագրի «Բիզնես</p>

		<p>վիճակագրության կատարելագործում» բաղադրիչի շրջանակում Դանիայի վիճակագրական ծառայության բիզնես ռեզիստրի գծով փորձագետների կողմից 2011 թվականին տրամադրվել են համապատասխան խորհրդատվություններ՝ միտված Արմստատի կողմից վարվող բիզնես ռեզիստրի վարման շարունակական կատարելագործմանը:</p> <p>Պարբերաբար իրականացվում է Արմստատի կողմից վարվող բիզնես ռեզիստրի ռազմավարության սահմանում, որն իր մեջ ընդգրկում է բիզնես ռեզիստրի հնարավոր զարգացումներն առաջիկա 5 տարիների համար:</p>
	<p>1.4 Հասկացությունների որոշում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների տեսանկյունից բիզնես ռեզիստրի զարգացմանն առնչվող բոլոր նախաձեռնությունների հիմքում ընկած են հետևյալ հայեցակարգերը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բիզնես ռեզիստրի տեղեկատվական բազայի ընդհանուր որակի բարելավում,</li> <li>2. Բիզնես ռեզիստրում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ընդգրկունության ամբողջականացում,</li> <li>3. Ռեսպոնդենտների վիճակագրական ծանրաբեռնվածության նվազեցում,</li> <li>4. ՀՀ-ում միասնական վարչական ռեզիստրի ձևավորում:</li> </ol> <p>Որպես բիզնես ռեզիստրի ցուցանիշների համակարգի հիմնական օգտագործողներ հանդիսանում են Արմստատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումները: Հետևաբար մշակվող ռազմավարությունը հնարավորության սահմաններում հաշվի է առնում նաև այն բոլոր առաջարկությունները, նպատակներն ու պահանջները, որոնք ներկայացվում են վերոհիշյալ ստորաբաժանումների կողմից:</p>
	<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>Բիզնես ռեզիստրի տեղեկատվական բազան իր մեջ ընդգրկում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ վերջիններիցս վիճակագրական հաշվետվական ձևերով ստացված անհատական(անվանական) տեղեկատվությունը: Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ բիզնես ռեզիստրի ցուցանիշների ճշգրտման, դրանցում կատարվող փոփոխությունների արդիականացման համար տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսանում նաև վարչական ռեզիստրներից՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնից (համաձայն 13.06.2011թ. ՀՀ արդարադատության նախարարի N85-Ն և Արմստատի նախագահի N68-Ն համատեղ հրամաններով հաստատված կարգի) և ՀՀ ֆինանսների նախարարությունից (համաձայն 04.09.2014թ. ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 575-Ա և 02.09.2014թ. Արմստատի նախագահի թիվ 124-Ա համատեղ հրամաններով հաստատված կարգի) ստացվող</p>

		<p>համապատասխան տեղեկատվությունը: Նշված տեղեկատվությունը տվյալների միկրոմակարդակով հասանելի չէ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին՝ հաշվի առնելով դրանց գաղտնիությանը վերագրվող օրենսդրական սահմանափակումները:</p>
	<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	<p>Բիզնես ռեզիստրի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունն հավաքվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ առանձին-առանձին՝ ՀՀ ՎՊԽ կողմից հաստատված վիճակագրական հարցաթերթերի միջոցով: Մինչ վիճակագրական հարցաթերթերի ընդունումը ՀՀ ՎՊԽ կողմից և ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրա պետական գրանցումը, որպես նորմատիվ իրավական ակտ, իրականացվում է դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգների մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների, իսկ հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը:</p>
<p>2. Նախագծում</p>		
	<p>2.1 Արդյունքների նախագծում</p>	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին», 2018 թվականի հոկտեմբերի 19-ի «Իրավաբանական անձանց վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի վարման կարգը հաստատելու մասին» թիվ 24-Ն Ձև թիվ 1-ԲՌ(տարեկան) վիճակագրական հարցաթերթը և դրանց լրացման հրահանգները հաստատելու մասին որոշման հիման վրա:</p> <p>Վարչական ռեզիստրներից համապատասխան տեղեկատվության ստացումը կարգավորվում է 2011 թ. հունիսի 13-ի ՀՀ արդարադատության նախարարի N 85-Ն և Արմստատի նախագահի N 68-Ն , ինչպես նաև 2014 թ. սեպտեմբերի 4-ի ՀՀ ֆինանսների նախարարի N124-Ա և 2014 թ. սեպտեմբերի 2-ի Արմստատի նախագահի N575-Ա համատեղ հրամաններով հաստատված դրույթներով:</p>
	<p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p>	<p>Բիզնես ռեզիստրի վերաբերյալ վիճակագրական հարցաթերթերի միջոցով տարեկան պարբերականությամբ հավաքվող վիճակագրական տեղեկատվության համակարգը ընդգրկում է.</p> <p>Ա/ իրավաբանական անձանց համար՝  ա/ իրավաբանական անձի ծածկագիրը,  բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեզիստրում գրանցման</p>

		<p>համարը,  դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը,  ե/ կազմակերպական-իրավական տեսակը,  զ/ գործունեության իրականացման հիմնական վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,  է/ հաշվետու տարում իրականացված գործունեության տեսակները,  ը/ թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և առևտրաշրջանառության ծավալը/հասույթը, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի  թ/ աշխատողների միջին տարեկան թվաքանակը:  Բ/ անհատ ձեռնարկատերերի համար՝  ա/ անունը, ազգանունը,  բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,  դ/ բնակության վայրը,  ե/ պետական գրանցման վայրը (եթե չի համընկնում բնակության վայրի հետ), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,  զ/ հաշվետու տարում իրականացված գործունեության տեսակները,  է/ թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և առևտրաշրջանառության ծավալը/հասույթը, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի,  ը/ աշխատողների միջին տարեկան թվաքանակը:  Ցուցանիշների հավաքման նպատակով կիրառվում է Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությունը (ՀՀ էկոնոմիկայի նախարարի N 1579-Ն 10.12.2019թ. հրաման ՀՀ ԳՏ 04.11.2013թ. 30/ (474).1 ) (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=370">https://www.armstat.am/am/?nid=370</a> հղումը):</p>
	<p>2.3 Տվյալների հավաքման նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրական հարցաթերթերի միջոցով՝ տեղեկատվության հավաքման համատարած դիտարկման եղանակով՝ տարեկան պարբերականությամբ:</p>
	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է Արմստատի վիճակագրական դիտարկման դաշտում գտնվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով:  Այդ նպատակով իրականացվում է.</p>

		<p>Արմատատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տիրապետվող տեղեկատվության, ինչպես նաև տնտեսվարող միավորների վերաբերյալ վարչական ռեգիստրներից ստացվող համապատասխան տեղեկատվության համադրումներ:</p> <p>Նոր գրացված կազմակերպությունների մասով իրականացվում են իրազեկման աշխատանքներ վիճակագրական դիտարկման դաշտ ընդգրկվելու վերաբերյալ, ապա համապատասխան վիճակագրական տեղեկատվության հավաքում: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից առցանց տրամադրվող տեղեկատվության հիման վրա եռամսյակային կտրվածքով Արմատատի մարզային և Երևան քաղաքի վարչություններ են ներկայացվում տեղեկատվություն նոր գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ:</p>
	<p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, ինչի հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան կազմակերպությունների հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են ցուցանիշների համապատասխան ճշգրտումներ: Վիճակագրական հարցաթերթերի միջոցով ստացվող տեղեկատվությունը համադրվում է նաև վարչական աղբյուրներից ստացվող համապատասխան տեղեկատվության հետ: Ցուցանիշների վերաբերյալ ոչ արժանահավատ, թերի կամ աղավաղումներով տեղեկատվության ներկայացման դեպքում համաձայն ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի» 169.2 հոդվածի պահանջների ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ստուգման գործընթաց, որի արդյունքում ճշգրտման են ենթարկվում ցուցանիշների վերաբերյալ նախորդող ժամանակաշրջանի տվյալները:</p>
	<p>2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց ամփոփումը իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:</p>
<p>3. Կառուցում</p>		
	<p>3.1 Հավաքման գործիքի կառուցում</p>	<p>Տեղեկատվության հավաքման իրականացման անհրաժեշտ վիճակագրական հաշվետվական ձևի և դրա լրացման հրահանգի հասանելիության ապահովման</p>

		<p>համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ (վիճակագրական հաշվետվական ձևեր):</p> <p>Արմատատի կողմից վարչական աղբյուրներից էլեկտրոնային եղանակով ստացվող վիճակագրական տեղեկատվության հասանելիության ապահովման համար առկա են համապատասխան էլեկտրոնային միջավայրի ապահովման միջոցներ:</p>
	<p>3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման ապահովման համար անհրաժեշտ գործիքներ:</p>
	<p>3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են Արմատատի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները:</p> <p>Բիզնես ռեզիստի տվյալների բազան կիրառվում է Արմատատի կառուցվածքային ստորաբաժանումների ընտրանքի կազմակերպման, ինչպես նաև տվյալների բազաների ստուգաճշտման նպատակով:</p> <p>Ըստ անհրաժեշտության, պահպանելով վիճակագրական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին վերապահվող սահմանափակումները, համապատասխան պաշտոնական գրություններին ի պատասխան վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին է ներկայացվում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:</p>
	<p>3.4 Գործընթացների կարգավորում</p>	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումը իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով`</p> <ol style="list-style-type: none"> <li>1. տեղեկատվության հավաքում</li> <li>2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ</li> <li>3. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով</li> <li>4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ</li> <li>5. տեղեկատվության կիրառում ներքին նպատակների համար</li> <li>6. վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին ամփոփ տեղեկատվության տրամադրում</li> </ol>
	<p>3.5 Արտադրության համակարգի փորձարկում</p>	<p>Պայմանավորված վիճակագրական հարցաթերթերում առկա ցուցանիշների փոփոխությունների հետ մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթները պարբերաբար ենթարկվում են համապատասխան փոփոխությունների: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային փաթեթերի թեստավորում:</p>

<p>3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում</p>	<p>Վիճակագրական նոր ցուցանիշի վիճակագրական հարցաթերթում ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է հարցաթերթի դաշտային փորձաքննություն և ցուցանիշի՝ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների (ռեսպոնդենտների) կողմից ընկալման փորձարկում: Իրականացվում են համապատասխան փոփոխություններ դրանց լրացման հրահանգներում և մեթոդական ցուցումներում:</p>
<p>3.7 Արտադրության համակարգի վերջնականացում</p>	<p>Իրականացվում են վիճակագրական հարցաթերթերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողներին (ռեսպոնդենտներին)՝ միաժամանակ օգտագործելով նաև կազմակերպությունների հետ համապատասխան մասնագետների բանավոր և էլեկտրոնային փոստի միջոցով շփումները: Ամփոփվում և վերջնականացվում են ցուցանիշների վերբերյալ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների ու վիճակագրական արտադրանքը օգտագործողների կարծիքներն, առաջարկություններն ու մտտեցումները:</p>
<p>4. Հավաքում</p>	
<p>4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում</p>	<p>Տեղեկատվության հավաքման համատարած դիտարկման արդյունքում ձևավորվում է բիզնես ռեզիստի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության գլխավոր համակցությունը, որն իր մեջ ներառում է Արմատատի վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ հավաքված համապատասխան վիճակագրական տեղեկատվությունը:</p>
<p>4.2 Հավաքման կազմակերպում</p>	<p>Տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա նախապես հայտնի կազմակերպությունների քանակին համապատասխան վիճակագրական հարցաթերթերի և ըստ անհրաժեշտության դրանց լրացման հրահանգների տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն ու բաշխում համապատասխան կազմակերպություններին: Միաժամանակ բոլոր վիճակագրական հարցաթերթերը ու դրանց լրացման հրահանգները հասանելի են նաև Արմատատի պաշտոնական կայքում: Առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հավաքման համար ցանցային միջոցներ: Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցները ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ վիճակագրական տեղեկատվության հավաքման գործընթացի կազմակերպման համար:</p>
<p>4.3 Հավաքման իրականացում</p>	<p>Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ինչպես Արմատատի տարածքային ստորաբաժանումների,</p>



		մարզային վարչությունների, այնպես էլ Արմատատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման:
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով:
	5. Մշակում	
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ մուտքագրված վիճակագրական տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:
	5.2 Դասակարգում և կոդավորում	Իրականացվում է ըստ կազմակերպության գործունեության տեսակների՝ ըստ դրանց հասույթների նվազման կարգի, կոդավորման աշխատանքներ՝ համաձայն Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչի (NACE, rev 2), ինչպես նաև մարզային և տարածքային միավորների կոդավորում՝ համաձայն նախապես սահմանված կոդավորման կարգի:
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում , ինչպես նաև ոչ ճիշտ կոդավորված տեղեկատվության համապատասխանեցում գործող դասակարգիչների պահանջներին: Կիրառելով Արմատատի համար վարչական տեղեկատվության աղբյուր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվությունը իրականացվում է տնտեսվարող միավորների պետական ռեգիստրում գրանցման, նույնականացման և հարկային մարմնում գրանցման համապատասխան կոդերի վավերացում: Միաժամանակ հասույթների և աշխատողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության համադրումներ են իրականացվում Արմատատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվության հետ:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Իրականացվում է բացակայող տեղեկատվության համալրում Արմատատի վիճակագրություն վարող

		կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տիրապետվող և/կամ դրանց վերաբերյալ վարչական աղբյուրներից ստացվող տեղեկատվության հիման վրա:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով հավաքված տեղեկատվությունը ապահովում է Արմստատի վիճակագրական դիտարկման դաշտի ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա ըստ անհրաժեշտության իրականացվում է ամփոփ տվյալների քանակական բնութագրիչների հաշվարկ՝ ըստ իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական տեսակների, գործունեության տեսակների, մարզային պատկանելիության, հասույթի և/կամ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, հիմնադիրների և այլն:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով տեղեկատվության նկատմամբ օգտագործողների (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) լրացուցիչ պահանջներից իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ բիզնես ռեգիստրի տեղեկատվության հիման վրա իրականացվում է բարդ խմբավորումների ստացում՝ միաժամանակ օգտագործելով բիզնես ռեգիստրում առկա ցուցանիշների մի շարք կոմբինացիաներ:
	<b>6. Վերլուծություն</b>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված բիզնես ռեգիստրի ցուցանիշների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության հիման վրա ըստ անհրաժեշտության իրականացվում է խմբավորումների, ինդեքսների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և պետական վիճակագրական հաշվետվական ձևերի լրացման հրահանգների:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով նախորդ տարիների վերաբերյալ համապատասխան ցուցանիշների դինամիկան:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին

		օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99454478.pdf">http://www.armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ մուտքագրված տեղեկատվության կիրառումը ըստ նպատակների իրականացվում է միևնույն տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության համեմատություններ, ինչի արդյունքում բացահայտվում է տեղեկատվության արժանահավաստությունը:
	<i>7. Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Յուրանքանչյուր տարի հունվարի 1-ի դրությամբ իրականացվում է բիզնես ռեգիստրի տեղեկատվական բազայի արդիականացում: Միաժամանակ նոր կազմակերպությունների գրանցման փաստի վերաբերյալ յուրանքանչյուր եռամսյակ տեղեկատվություն է տրամադրվում Արմստատի մարզային վարչություններին դրանց ըստ անհրաժեշտության վիճակագրական դիտարկման դաշտ ընդգրկելու նպատակով:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	Բիզնես ռեգիստրի տվյալների բազան կիրառվում է Արմստատի կառուցվածքային ստորաբաժանումների ընտրանքի կազմակերպման, ինչպես նաև տվյալների բազաների ստուգաճշտման նպատակով:
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում արդեն մուտքագրված և բիզնես ռեգիստրի բազայում արտացոլված ցուցանիշները:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում և հնարավորության սահմաններում իրականացվում է բիզնես ռեգիստրի բազայից համապատասխան հարցումների կառուցում և տեղեկատվության տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	<i>8. Գնահատում</i>	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Իրականացվում է վարչական աղբյուրներից տեղեկատվության ստացում՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից առցանց, ֆինանսների նախարարությանից՝ տարեկան պարբերականությամբ էլեկտրոնային կրիչների միջոցով:

<p>8.2 Գնահատման իրականացում</p>	<p>Վիճակագրական ցուցանիշների որակի կառավարման տեսանկյունից իրականացվում են վիճակագրական հաշվետվական ձևերով՝ այն է բիզնես ռեզիստրի հարցաթերթերով, Արմատատի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վիճակագրական հաշվետվական ձևերով հավաքվող և վարչական աղբյուրներից ստացվող համապատասխան ցուցանիշների համադրումներ:</p>
<p>8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում</p>	<p>Համեմատվող միևնույն ցուցանիշի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ:</p>